2. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր, 7-րդ փողոց թիվ 4 / 1 հասցեում գտնվող 0.182հա մակերեսով հողատարածքում 2023-2024թթ. կառուցված 122.67քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 101.36քմ/, 4.15քմ մակերեսով սանհանգույցը /ներքին մակերեսը՝ 2.65քմ/ և 11.98քմ մակերեսով պարիսպը ճանաչել ինքնակամ:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան

3086

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2803-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Արմեն Ալբերտի Պողոսյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41/ 10 հասցեում կառուցված 53.0 քմ մակերեսով ավտոտնակը, 53.0քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 10 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 21.07.2026թ. թիվ 1795-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 31.08.2026թ. պետական գրանցում ստացած 53.0 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, զբաղեցրած 53.0 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Արմեն Ալբերտի Պողոսյանին:
2. Քաղ. Արմեն Պողոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան

3087

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2803-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Արմեն Ալբերտի Պողոսյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41/ 10 հասցեում կառուցված 53.0 քմ մակերեսով ավտոտնակը, 53.0քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 10 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 21.07.2026թ. թիվ 1795-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 31.08.2026թ. պետական գրանցում ստացած 53.0 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, զբաղեցրած 53.0 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Արմեն Ալբերտի Պողոսյանին:
2. Քաղ. Արմեն Պողոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան

3087

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2804-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 10-ի N 1/փ-403 եզրակացությունը, Սևան համայնքի ավագանու՝ 22. 09. 2026թ. N 145-Ա որոշումը և «Պապրիկա» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մախմուդյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 0.04043հա մակերեսով հողատարածքի /կադաստրային ծածկագիր՝ 05-024-0274-0017/ նպատակային նշանակությունը փոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի, տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, Երևան-Սևան մայրուղի, 53-54կմ թիվ 28 / 1 հողամաս:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3088

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2805-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն,18. 05. 2006թ. թիվ 912-Նորոշումների և հիմք ընդունելով քաղ. Հարություն Կարապետյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ իրեն պատկանող, ք. Սևան, Գայի փողոց թիվ 1 հասցեում գտնվող 580. 0քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփականության իրավունք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Հարություն Սասունիկի Կարապետյանին /ծնված՝ 09. 04. 1995թ/, պատկանող, ք. Սևան, Գայի փողոց թիվ 1 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 580քմ մակերեսով հողատարածքին կից՝ 116. 0քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Հարություն Կարապետյանի սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքով Հարություն Սասունիկի Կարապետյանին պատկանող 696. 0քմ մակերեսով հողատարածքում 1977թ. կառուցված 115. 9քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 83. 2քմ/, 5. 8քմ մակերեսով աստիճանահարթակը՝ 79. 6քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 54. 9քմ/ ճանաչել Հարություն Սասունիկի Կարապետյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 2 / 2 բնակելի տուն հասցե:
3. Սեփականության իրավունքով Հարություն Սասունիկի Կարապետյանին պատկանող 696. 0քմ մակերեսով հողատարածքում սեփականատրիոջ կողմից 2023թ. կառուցված 12. 4քմ մակերեսով օժանդակ շինությունը /ներքին մակերեսը՝ 8. 8քմ/ ճանաչել ինքնակամ:

4. Հարություն Սասունիկի Կարապետյանին պատկանող 696. 0քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 423. 9քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ազատության փողոց թիվ 25 հողամաս հասցե՝ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 563. 25/ դրամով օտարել Հարություն Սասունիկի Կարապետյանին :
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2806-Ա

ՆՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Անուշ Խաչատրյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3091

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2807-Ա

ՍԱՄՎԵԼ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Սամվել Նարիբեկյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3092

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2808-Ա

ՋԻՎԱՆ ԱՖՐԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Ջիվան Աֆրիկյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3093

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2809-Ա

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Վահե Թորոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3094

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2810-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.0400հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ծովակալ Իսակովի փողոց թիվ 3 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3095

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2811-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 22 և Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 22 / 2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկականներ՝ 18092026-05-0075 և 06102026-05-0009/ միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական թիվ 22 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2812-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 2447-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 18-ի «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N2447-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 1-ին կետում՝ «590. 7 դրամ» բառերից հետո կարդալ «յուրաքանչյուր փոփոխված պատուհանի /1 հատ/ համար պատուհան/ 1969 դրամ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3097

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2813-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-040-0207-0001 կադաստրային ծածկագրով /գ. Լճաշեն/, 0.02998հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3098

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2814-Ա

«ԹՈՒՋ ԵՎ ՊՈՂՊԱՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱԼԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով «Թուջ և պողպատ» ՍՊԸ-ի տնօրեն Ալիկ Սեյրանյան կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունների փաստը՝ պարզեցի. Համաձայն ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից իրավախախտում կատարելու վերաբերյակ կատարված N040226299 արձանագրության՝ «Թուջ և պողպատ» ՍՊԸ-ի տնօրեն Ալիկ Սեյրանյանի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ 2007 թվականի փետրվարի 9-իննկնքված հողամասի կառուցապատման իրավունքի N 669-060 պայմանագրով՝ ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում առկա են ինքնակամ շինություններ՝ քարից կառուցված պարիսպ և ապօրինի տեղադրված մեկ հատ մետաղական վագոն-տնակ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Թուջ և պողպատ» ՍՊԸ-ի տնօրեն Ալիկ Սեյրանյանը սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու նպատակով 2026 թվականի հոկտեմբերի 7-ին Սևանի համայնքի ղեկավարը վարույթը կասեցրել է: Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների «Թուջ և պողպատ» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը համարվում է ծանուցված: Ծանուցման սահմանված ժամկետը լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը չի ներկայացել վարչական գործի քննությանը: Վարույթի շրջանակներում հիմնավորվել է, որ «Թուջ և պողպատ» ՍՊԸ-ի տնօրենը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջները՝ առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները կառուցվել կամ տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով հողատարծքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականություն հանդիսացող, բնության հատուկ պահպանվող հողատարածքներ: ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ կետի բ)

ենթակետի համաձայն՝ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: «Տեղական ինքնակառավարման մասին»նօրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինության ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Թուջ և պողպատ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տեղադրված կամ կառուցված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում: Միաժամանակ հողատարածքում քարից պարսպի կառուցումը և վագոն-տնակի տեղադրումը իրականացվել է մինչև 2021թ. դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-401-Ն օրենքի փոփոխությունները, նախկին օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից իրականացվել է ինքնակամ շինությունների կառուցում կամ տեղադրում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ, 154-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2001թ. սեպտեմբերի 24-ի N 896 որոշման, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել «Թուջ և պողպատ» ՍՊԸ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՀՀ ՆԳՆ Ոստիկանության համայնքային գլխավոր վարչության Սևանի ներքին գործերի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3100

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2815-Ա

ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 040226289 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N40.512455 E44.966759 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226249 արձանագրության համաձայն ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 398 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N40.512455 E44.966759 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված և կառուցված 10 հատ վագոն-տնակ, 6 հատ զրուցարան: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել է շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի

ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել N40.512455 E44.966759 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել 4.Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3102

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2816-Ա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին 2.1 մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 24-ի N 17-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026 թվականի սեպտեմբերի 26-ի N 301-Ա որոշմամբ սահմանված Տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստական և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 11-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. 2026 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք Տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նպատակով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում սահմանել ընտրական տեղամասերի տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Սահմանել ընտրական տեղամասերի տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների մատչելիության, լուսավորության և հանձնաժողովի բնականոն աշխատանքի ապահովման ցանկը՝ ըստ հավելված 2-ի:
3. Սևան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանին՝ սահմանված ժամկետում որոշման մեկ օրինակն ուղարկել թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 12
ք.Սևան

3103

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2817-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Ժաննա Մարտիրոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ժաննա Մարտիրոսյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 16 / 2 հասցեում գտնվող հողամասում անավարտ կիսանկուղային հարկի վերակառուցման, բնակելի տան և պարսպի կառուցման համար:
2. Ժաննա Մարտիրոսյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Ժաննա Մարտիրոսյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆԵՑՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 13
ք.Սևան

3104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2818-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143 կետով, ՀՀ օրենքի 14^3 կետով, ՀՀ վարչապետի՝ 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և հիմք ընդունելով քաղ. Խաչատուր Բադեյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Ծովագյուղ հողամաս հասցեում գտնվող 0.13010հա մակերեսով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծովագյուղ հողամաս հասցեում գտնվող 0.13010հա մակերեսով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել Ծովագյուղ բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 13
ք.Սևան

3105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2819-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Աբովյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գագարին, Գործարանային փողոցթիվ 2 / 5 հասցեում գտնվող 0.67865հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակությունը փոխելու մասին՝ **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գագարին, Գործարանային փողոց թիվ 2 / 5 հասցեում գտնվող 0.67865հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ նպատակային նշանակություն, գյուղատնտեսական արտադրական՝ գործառնական նշանակություն ունեցող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 13
ք.Սևան

3106

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2820-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 2561-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 25-ի «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N2561-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման նախաբանից հանել «ՀՀ Կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ» բառերը:

2) որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «0.23075հա մակերեսով հողատարածքում» բառերից հետո կարդալ «/վկայական՝ N 22122025-05-0015/» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ



2026 թվականի հոկտեմբերի 13
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2821-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հայկազ Մխիթարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Օրբելի Եղբայրների փողոց թիվ 6 / 1 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 29082026-005-0029/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, համայնք Սևան, ք. Սևան, Օրբելի Եղբայրների փողոց թիվ 6 / 1 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.07353 հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ելենովկայի փողոց թիվ 20 հողամաս հասցե;

2) երկրորդ միավոր գույքի՝ 0.06000 հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Օրբելի Եղբայրների փողոց թիվ 6 / 1 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 13
ք.Սևան

3108

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2822-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2026թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» հաշվից /բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / 100.000 դրամ փոխանցել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ին՝ Սևան համայնքի բնակիչ Սևան համայնքի բնակիչ Սպարտակ Մաթևոսյանի բժշկական ծախսերը փոխհատուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 13
ք.Սևան

3109